ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

ԱՊՐՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան.

ապրող փաստաթուղթ

Հայերեն ոչ պաշտոնական թարգմանություն
The European Conventon on Human Rights – A living instrument

Սույն փաստաթուղթը պատրաստվել է Դատարանի հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից: Դրա նպատակն է պարզեցված ձևով ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքները, և նախատեսված է զուտ կրթական նպատակներով օգտագործման համար: Իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթղթերը Կոնվենցիայի պաշտոնական տարբերակներն են՝ ֆրանսերեն և անգլերեն լեզուներով:

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման որևէ մասը չի կարող առանց ՄԻԵԴ-ի Քարտուղարության Հասարակայնության հետ կապերի բաժնի գրավոր նախնական թույլտվության որևէ տեսքով կամ որևէ եղանակով՝ էլեկտրոնային (լազերային սկավառակի, ինտերնետի և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ լուսապատճենմամբ, ձայնագրմամբ կամ տեղեկատվության պահպանման կամ վերծանման որևէ համակարգով թարգմանվել, վերարտադրվել կամ փոխադրվել:

© Լուսանկարների իրավունքները՝ Եվրոպայի խորհրդի

© Ձևավորումը՝ «Shutterstock»-ի

© Գրաֆիկական դիզայնը՝ ՄԻԵԴ-ի Քարտուղարության Հասարակայնության հետ կապերի բաժնի

© Շարվածքը՝ ՄԻԵԴ-ի Քարտուղարության Հասարակայնության հետ կապերի բաժնի

© Մարդու իրավունքների եվրոպական դատարան, սեպտեմբեր, 2022 թ.

Բովանդակություն

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան 5

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 5

Նախադեպային պրակտիկան 6

Կոնվենցիայի ազդեցությունը 6

Կոնվենցիան՝ արդիական փաստաթուղթ 7

Կոնվենցիայի համակարգի բարեփոխումները 8

Հավելված 1. Համառոտ տեղեկություններ կոնվենցիայի մասին 10

Հավելված 2. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիան 15

Հավելված 3. Կարևոր տարեթվեր 16

Հավելված 4. Կոնվենցիային կից արձանագրությունները 18

Հավելված 5. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ստորագրումների և վավերացումների ցանկը (համաձայնագիր թիվ 005) 22

Եվրոպական կոնվենցիան կարևոր է՝ հաշվի առնելով դրանով պաշտպանվող իրավունքների և ազատությունների շրջանակը, ինչպես նաև կոնվենցիայի միջոցով ստեղծված համակարգի բնույթը, որը ներառում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ստեղծումը, ինչպես նաև Մասնակից պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարումը վերահսկելու գործառույթի վերապահումը նշված դատարանին: Այդ համակարգում անհատներն իրավունք ունեն իրենց իրավունքների և ազատությունների ոտնահարման դեպքում զանգատ ներկայացնել ընդդեմ Մասնակից պետության:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որը ստորագրվել է 1950 թվականի նոյեմբերի 4-ին Հռոմում, առաջին փաստաթուղթն էր, որը հստակեցրեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով ամրագրված իրավունքները և պարտադիր ուժ հաղորդեց դրանց: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսվում են բացարձակ իրավունքներ, որոնք երբեք չեն կարող խախտվել Մասնակից պետությունների կողմից. այդ իրավունքներից են կյանքի իրավունքը և խոշտանգման արգելքը: Կոնվենցիան պաշտպանում է նաև որոշ այնպիսի իրավունքներ և ազատություններ, որոնք կարող են սահմանափակվել միայն օրենքով, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում, օրինակ՝ անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքը:

Արձանագրությունների ընդունմամբ մի շարք իրավունքներ են ավելացվել տեքստի սկզբնական տարբերակին, որոնք վերաբերում են, մասնավորապես, մահապատժի վերացմանը, սեփականության պաշտպանությանը, ազատ ընտրությունների իրավունքին և տեղաշարժի ազատությանը:



Մարդու իրավունքների եվրոպական դատարանը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որը Եվրոպայի խորհրդի դատական մարմինն է, քննում է անհատներից ստացված գանգատները, ինչպես նաև միջպետական գանգատները, որոնք մեկ Կոնվենցիայի մասնակից պետությունները ներկայացնում են միմյանց դեմ: 46 պետություններ ներկայումս պարտավորվել են հիմնական իրավունքները և ազատությունները երաշխավորել ոչ միայն իրենց քաղաքացիներին, այլև՝ իրենց իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց, ներառյալ՝ ոչ եվրոպացիներին:

Նախադեպային պրակտիկան

Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան հարուստ է և վերաբերում է բազմաթիվ տարբեր ոլորտների: Դատարանի կողմից առավել հաճախ արձանագրվող՝ Կոնվենցիայի խախտումը վերաբերում է արդար դատաքննության իրավունքին՝ պայմանավորված վարույթի բավարար չափով արդար չլինելով կամ չափազանց երկար տևողությամբ: Անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի և սեփականության պաշտպանության իրավունքի խախտումներ նույնպես հաճախ են արձանագրվում:

Դատարանն իր որոշումներով բազմիցս անդրադարձել է հասարակական տարաբնույթ խնդիրների՝ հղիության արհեստական ընդհատմանը, աջակցվող ինքնասպանությանը, մարմնի խուզարկությանը, կենցաղային ստրկությանը, նույնասեռականների կողմից որդեգրմանը, դպրոցներում կրոնական խորհրդանիշներ կրելուն, լրագրողների աղբյուրների պաշտպանությանը և ԴՆԹ տվյալների պահպանմանը:

Կոնվենցիայի ազդեցությունը

Դատարանի աշխատանքի նշանակալից ազդեցությունը պայմանավորված է նրա դատական ակտերի պարտադիր իրավաբանական ուժով: Եթե Դատարանը որոշում է, որ Մասնակից պետությունը թույլ է տվել խախտում, ապա այդ պետությունը պարտավոր կլինի վերականգնել զանգատաբերի կրած վնասը և հնարավորության սահմաններում վերացնել խախտման հետևանքները: Պետությունը պարտավոր է նաև բացառել համանման խախտումներն ապագայում, այսինքն՝ այնպես անել, որպեսզի այլ անձանց նկատմամբ տեղի չունենա նույն խախտումը: Պրակտիկայում դա հաճախ հանգեցնում է օրենսդրության փոփոխությունների:

Փոփոխելով օրենսդրությունը կամ պրակտիկան՝ դրանք համապատասխանեցնելով Կոնվենցիային, պետությունները բոլոր անձանց հնարավորություն են ընձեռում օգուտ քաղել մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հետագա զարգացումից: Դատական մեկ ակտն այդկերպ կարող է ազդեցություն ունենալ երկրի ողջ բնակչության վրա: Դատական ակտի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Նախարարների կոմիտեին, որը Եվրոպայի խորհրդի գործադիր մարմինն է:

Դատարանի կայացրած ակտերի արդյունքում տեղի ունեցած փոփոխությունների օրինակները.

- Կիպրոսն ապաքրեականացրել է փոխադարձ համաձայնությամբ նույնասեռական հարաբերությունները չափահասների միջև:
- Վերացվել է արհմիությանն անդամակցելու պարտավորությունը Դանիայում:
- Ֆրանսիան ճանաչել է ժառանգման իրավունքների հավասարությունն օրինական ամուսնության շրջանակում և օրինական ամուսնությունից դուրս ծնված երեխաների միջև:
- Միացյալ Թագավորությունն արգելել է ֆիզիկական պատիժը պետական դպրոցներում:
- Շվեյցարիան ընդունել է օրենք, որով կարգավորել է հեռախոսի գաղտնալսումը:
- Մի շարք պետություններ իրավական պաշտպանության միջոցներ են ամրագրել՝ մարդկանց հնարավորություն ընձեռելով բողոք ներկայացնել իրավական վարույթների ոչ խելամիտ աստիճանի երկար տևողության դեպքում:

Կոնվենցիան՝ արդիական փաստաթուղթ

Կոնվենցիան ազդեցիկ է և խիստ արդիական՝ պայմանավորված Դատարանի կողմից տրվող մեկնաբանություններով, որոնք դինամիկ են և համահունչ են ընթացիկ իրողություններին: Դատարանն իր նախադեպային պրակտիկայի միջոցով ընդարձակել է Կոնվենցիայով ամրագրված իրավունքները, ինչի արդյունքում Կոնվենցիայի դրույթներն այսօր կիրառելի են այնպիսի իրավիճակների նկատմամբ, որոնք ամբողջովին անկանխատեսելի և աներևակայելի էին Կոնվենցիայի ընդունման ժամանակ, ինչպիսիք են, մասնավորապես, նոր տեխնոլոգիաներին, կենսաէթիկային կամ շրջակա միջավայրին առնչվող տարբեր հիմնախնդիրները: Կոնվենցիան կիրառելի է նաև հասարակական նշանակության կամ զգայուն այնպիսի խնդիրների նկատմամբ, որոնք կապված են, օրինակ, ահաբեկչության կամ ներգաղթի հետ:

Կոնվենցիայի համակարգի բարեփոխումները

Իր ստեղծման օրվանից՝ 1959 թվականից ի վեր Դատարանն ավարտին է հասցրել մոտ 910,000 գանգատների քննությունը՝ կա՛մ կայացնելով վճիռ կամ որոշում, կա՛մ հեռացնելով (ջնջելով) գործն իր կողմից քննվող գործերի ցանկից:

Գործերի ծավալի աճի պայմաններում Եվրոպայի խորհրդի Անդամ պետությունները Կոնվենցիային կից տարբեր արձանագրություններ են ընդունել՝ նպատակ հետապնդելով բարելավել և ամրապնդել սկզբնապես ստեղծված վերահսկողական մեխանիզմը: Այսկերպ ներդրվել են դատական նոր կազմեր, որոնք զբաղվում են առավել ակնհայտ գործերով:

Զուգահեռաբար՝ Դատարանը նաև վերափոխել է իր աշխատանքային մեթոդները՝ բարձրացնելու համար իր աշխատանքների արդյունավետությունը և ռեսուրսների օգտագործման օգտակար գործակիցը: Մասնավորապես, միանման խնդիրների վերաբերող գանգատների ահռելի թվի ներհոսքը հաղթահարելու նպատակով Դատարանը ներդրել է փորձնական (պիլոտային) վճիռների ընթացակարգը. այդ խնդիրները երբեմն անվանվում են «համակարգային» խնդիրներ, որոնց պատճառը ներպետական օրենսդրության անհամապատասխանությունն է Կոնվենցիային:

Դատարանը նաև առաջնահերթացման քաղաքականություն է որդեգրել, որում գանգատների քննարկման հերթականությունը որոշելու նպատակով հաշվի են առնվում արծարծվող խնդիրների կարևորությունը և հրատապությունը:

Կոնվենցիան մշակվեց և ընդունվեց, քանի որ Ստորագրող պետությունները վճռական էին տրամադրված՝ պատմության գրկում թողնելու Երկրորդ աշխարհամարտի արհավիրքը: 1949 թվականին 10 պետություններ ստեղծեցին Եվրոպայի խորհուրդը՝ նպատակ հետապնդելով վերջինիս օգնությամբ ողջ Եվրոպայում երաշխավորել հարգանքը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության նկատմամբ: Մեկ տարի անց 12 պետություններ ընդունեցին Կոնվենցիան՝ այդկերպ ստեղծելով Դատարանը, որի խնդիրն էր ապահովել պետությունների կողմից իրենց ստանձնած պարտավորությունների կատարումը, հանդես գալով որպես միջազգային դատարան, որն իրավազորություն կունենա՝ որոշումներ կայացնելու պետությունների դեմ և վերջիններիս պարտավորեցնելու փոփոխել իրենց օրենսդրությունը:

Այսօր՝ ավելի, քան երբևէ, Կոնվենցիան Եվրոպայի խորհրդի անկյունաքարն է, և ցանկացած պետություն, որը ցանկանում է անդամակցել այս կազմակերպությանը, պարտավոր է ստորագրել և վավերացնել Կոնվենցիան: Դատարանի նախադեպային պրակտիկային հետևում են եվրոպական աշխարհամասում Կոնվենցիան վավերացրած պետությունների ազգային դատարանները: Դատարանի նախադեպային պրակտիկան մեջբերվում է նաև Եվրոպայի սահմաններից անդին գործող բազմաթիվ դատարանների կողմից:

Հավելված 1. Համառոտ տեղեկություններ կոնվենցիայի մասին

Հոդված **1**

Մարդու իրավունքները հարգելու պարտականությունը

Պետությունները պետք է ապահովեն իրենց տարածքում կամ իրենց կողմից վերահսկվող տարածքում գտնվող յուրաքանչյուր անձի Կոնվենցիայով սահմանված իրավունքներն ու ազատությունները:

Հոդված **2**

Կյանքի իրավունք

Յուրաքանչյուր անձի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով:

Հոդված **3**

Խոշտանգումների արգելում

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի:

Հոդված **4**

Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում

Ոչ ոք չպետք է վերաբերվի որպես ստրուկ կամ պարտադրվի հարկադիր աշխատանք կատարելու:

Հոդված **5**

Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի ազատության իրավունք: Յուրաքանչյուր ձերբակալված անձ պետք է ձերբակալությունից կարճ ժամանակ անց տեղեկացվի դրա պատճառների մասին: Ձերբակալված անձը պետք է անհապաղ ներկայացվի դատարան, և նրա գործը քննվի ողջամիտ ժամկետում, կամ ազատ արձակվի մինչև դատաքննության սկիզբը:

Հոդված **6**

Արդար դատաքննության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում անկախ և անաչառ դատարանի կողմից արդար դատաքննության իրավունք:

Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է հանցագործության մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ իր մեղավորությունը չի ապացուցվել: Մեղադրյալը պետք է արագ տեղեկացվի իր նկատմամբ առաջադրված մեղադրանքի մասին և կարողանա նախապատրաստել իր պաշտպանությունը: Նա իրավունք ունի, որպեսզի իր շահերը ներկայացնի պետության կողմից վճարվող փաստաբանը, եթե նա չունի միջոցներ դատապաշտպանի ծախսերը վճարելու համար:

Հոդված **7**

Առանց օրենքի պատժի բացառում

Ոչ ոք չի կարող դատապարտվել այն հանցանքի համար, որը գոյություն չի ունեցել իրադարձությունների տեղի ունենալու պահին:

Հոդված **8**

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքի, ինչպես նաև իր տան և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

Հոդված **9**

Մտքի, խղճի և կրոնի ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Յուրաքանչյուրը կարող է դավանել իր կրոնը հրապարակավ կամ մասնավոր կերպով և փոխել իր կրոնը:

Հոդված **10**

Արտահայտվելու ազատություն

Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այն ներառում է կարծիքների ազատություն, ինչպես նաև տեղեկատվություն և գաղափարներ տարածելու և ստանալու ազատություն:

Հոդված **11**

- Հավաքների և միավորման ազատություն

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մասնակցել խաղաղ հավաքների և անդամագրվել միավորումներում: Այն ներառում է արհեստակցական միություն ստեղծելու իրավունքը, ինչպես նաև որևէ արհեստակցական միությանը անդամագրվելու ազատությունը:

Հոդված **12**

- Ամուսնության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունք:

Հոդված **13**

- Արդյունավետ պաշտպանության միջոցի իրավունք

Յուրաքանչյուր ոք պետք է ունենա դատարան դիմելու միջոց, եթե նրա իրավունքները խախտվել են:

Հոդված **14**

- Խտրականության արգելում

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի օգտվելու

Կոնվենցիայում ամրագրված իրավունքներից և ազատություններից՝ անկախ այնպիսի գործոններից, ինչպիսիք են սեռը, մաշկի գույնը, կրոնը, քաղաքական դիրքորոշումները կամ ծագումը:

Հոդված **34**

- Անհատական դիմումներ

ՄԻԵԴ դիմելու իրավունքը բացարձակ է: Պետությունները չպետք է որևէ պարագայում խոչընդոտեն այդ իրավունքին:

Թիվ **1** Արձանագրության **1**-ին հոդված

- Սեփականության պաշտպանություն

Յուրաքանչյուր ոք ունի սեփականության, ինչպես նաև իր գույքից օգտվելու իրավունք:

Թիվ **1** Արձանագրության **2** -րդ հոդված

- Կրթության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի կրթության և դասավանդման իրավունք:

Թիվ **1** Արձանագրության **3**-րդ հոդված

- Ազատ ընտրությունների իրավունք

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի գաղտնի քվեարկությամբ մասնակցել օրենսդիր մարմնի (այսինքն՝ ազգային խորհրդարանի) և Եվրախորհրդարանի ընտրություններին:

Թիվ **4** Արձանագրության **2**-րդ հոդված

- Ազատ տեղաշարժի իրավունք

Յուրաքանչյուր ոք, ով օրինական կարգով գտնվում է որևէ երկրում, կարող է ազատորեն տեղաշարժվել դրա տարածքում և ընտրել իր բնակության վայրը:

Թիվ **6** Արձանագրության **1**-ին հոդված

- Մահապատժի վերացում

Ոչ ոք չի կարող պետության կողմից դատապարտվել մահվան կամ մահապատժի ենթարկվել:

Թիվ **7** Արձանագրության **2**-րդ հոդված

- Քրեական գործերով բողոքարկման իրավունք

Հանցագործության համար դատապարտված յուրաքանչյուր ոք իրավունք ունի բողոքարկել ավելի բարձր դատարան:

Թիվ **7** Արձանագրության **3**-րդ հոդված

- Փոխհատուցում սխալ դատապարտման համար

  Յուրաքանչյուր ոք, ով դատապարտվել է դատական սխալի արդյունքում, իրավունք ունի փոխհատուցման:

Թիվ **7** Արձանագրության **4**-րդ հոդված

- Կրկնակի դատապարտման կամ պատժի ենթարկման բացառում

  Ոչ ոք չի կարող ենթարկվել կրկնակի դատապարտման միևնույն քրեական հանցագործության համար, եթե նոր փաստեր չեն ապացուցվել:

Թիվ **7** Արձանագրության **5**-ին հոդված

- Ամուսինների միջև հավասարություն

  Ամուսնացած զույգերն ունեն միևնույն իրավունքներն ու պարտականությունները՝ ինչպես միմյանց, այնպես էլ իրենց երեխաների հանդեպ:

Թիվ **12** Արձանագրության **1**-ին հոդված

- Խտրականության ընդհանուր արգելում

  Յուրաքանչյուր ոք պետք է կարողանա օգտվել իր իրավունքներից՝ առանց խտրականության՝ ենթարկվելու այնպիսի հիմքերով, ինչպիսիք են՝ սեռը, մաշկի գույնը, քաղաքական կամ կրոնական համոզմունքները կամ ծագումը:

Թիվ **13** Արձանագրության **1**-ին հոդված

- Մահապատժի վերացում

  Մահապատիժը արգելվում է նույնիսկ պատերազմի ժամանակ:

Հավելված 2. Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիան

(Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, 4-ը նոյեմբերի, 1950 թ.) ստորագրած պետությունները

- Բելգիայի Թագավորության կառավարության անունից. Փոլ ՎԱՆ ԶԻԼԱՆԴ
- Դանիայի Թագավորության կառավարության անունից. Օտտո Կարլ ՄՈՐ
- Ֆրանսիայի Հանրապետության կառավարության անունից. Ռոբերտ ՇՈՒՄԱՆ
- Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության անունից. Վալտեր ՀԱԼՇՏԱՅՆ
- Իսլանդիայի Հանրապետության կառավարության անունից. Փիթուր ԲԵՆԵԴԻԿՏՍՈՆ
- Իռլանդիայի Հանրապետության կառավարության անունից. Շոն ՄԱԿ ԲՐԱՅԴ
- Իտալիայի Հանրապետության կառավարության անունից. Կարլո ՍՖՈՐԶԱ
- Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության կառավարության անունից. Ժոզեֆ ԲԵՔ
- Նիդեռլանդների Թագավորության կառավարության անունից. Դիրք ՍԹԻՔԵՐ
- Նորվեգիայի Թագավորության կառավարության անունից. Հալվարդ Մենթի ԼԱՆԳԵ
- Սաարի կառավարության անունից. Էդգար ՀԵԿՏՈՐ
- Թուրքիայի Հանրապետության կառավարության անունից. Մեհմետ Ֆուատ ՔՅՈՓՐՈՒԼՈՒ
- Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության անունից. Էրնեստ ԴԵՅՎԻԶ

Հավելված 3. Կարևոր տարեթվեր

5-ը մայիսի, 1949 թ.

- Եվրոպայի խորհրդի ստեղծման մասին Լոնդոնի համաձայնագրի ստորագրումը

4-ը նոյեմբերի, 1950 թ.

- Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիան (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) ստորագրումը Հռոմում

3-ը սեպտեմբերի, 1953 թ.

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

21-ը հունվարի, 1959 թ.

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորների առաջին կազմի ընտրությունը Եվրոպայի խորհրդի Խորհրդակցական ժողովի կողմից:

14-ը նոյեմբերի, 1960 թ.

- Դատարանը կայացնում է իր առաջին վճիռը. Lawless v. Ireland

1-ը նոյեմբերի, 1998 թ.

- Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 11 արձանագրության համաձայն՝ ստեղծվում է նոր Դատարանը: Մշտական հիմունքներով աշխատող միասնական Դատարանը փոխարինում է նախկին՝ վերահսկողական համակարգին:

1-ը հունիսի, 2010 թ.

- Ստեղծվում են դատական նոր գործառույթներ՝ գործերի քննարկումն արագացնելու համար: Դատավորներն այժմ պաշտոնավարում են 9 տարի ժամկետով՝ առանց երկրորդ ժամկետ պաշտոնավարելու իրավունքի:

Հավելված 4. Կոնվենցիային կից արձանագրությունները

Լրացուցիչ արձանագրությունը

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 18-ը մայիսի, 1954 թ.

Հայտնի է որպես թիվ 1 արձանագրություն. նախատեսում է նոր իրավունքներ, մասնավորապես՝ սեփականությունից անարգել օգտվելու իրավունքը, կրթության իրավունքը և գաղտնի քվեարկությամբ անցկացվող ազատ ընտրությունների իրավունքը:

Թիվ **2** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 21-ը սեպտեմբերի,1970 թ.

Դատարանին իրավունք է վերապահում՝ խորհրդատվական կարծիքներ ներկայացնել Նախարարների կոմիտեի խնդրանքով:

Թիվ **3** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 21-ը սեպտեմբերի,1970 թ.

Կոնվենցիայի 29-րդ, 30-րդ և 34-րդ հոդվածներում փոփոխություններ է կատարում:

Թիվ **4** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 2-ը մայիսի, 1968 թ.

Նախատեսում է, մասնավորապես, պայմանագրային պարտավորությունների չկատարման համար բանտարկելու արգելքը, տեղաշարժի ազատության իրավունքը և բնակության վայրն ընտրելու ազատությունը, ինչպես նաև քաղաքացիների վտարման արգելքը և օտարերկրացիների կոլեկտիվ վտարման արգելքը:

Թիվ **5** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 20-ը դեկտեմբերի, 1971 թ.

Կոնվենցիայի 22-րդ և 40-րդ հոդվածներում փոփոխություններ է կատարում:

Թիվ **6** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը մարտի, 1985 թ.

Մահապատժի վերացման մասին:

Թիվ **7** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը նոյեմբերի, 1988 թ.

Նախատեսում է, մասնավորապես, քրեական գործերով վերաքննության իրավունքը, սխալ դատապարտվելու դեպքում փոխհատուցում ստանալու իրավունքը, կրկին անգամ չդատվելու և չպատժվելու իրավունքը, ինչպես նաև ամուսինների միջև հավասարությունը:

Թիվ **8** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը հունվարի, 1990 թ.

Փոփոխում է Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի գործունեության կարգը:

Թիվ **9** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը հոկտեմբերի, 1994 թ.

  Գանգատաբերներին իրավունք է վերապահում որոշ հանգամանքներում խնդրել, որպեսզի Դատարանը քննի իրենց գործը:

Թիվ **10** արձանագրություն.

- Ստորագրման ամսաթիվը. 25-ը մարտի, 1992 թ.

  Բարելավում է Կոնվենցիայի վերահսկողության ընթացակարգը Կոնվենցիայի նախկին համակարգի շրջանակում (այս փաստաթուղթը նպատակագրկվել է, երբ ուժի մեջ է մտել թիվ 11 արձանագրությունը):

Թիվ **11** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը նոյեմբերի, 1998 թ.

  Ստեղծում է «նոր Դատարանը»:

Թիվ **12** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը ապրիլի, 2005 թ.

  Ներդնում է խտրականության համընդհանուր արգելքը:

Թիվ **13** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը հուլիսի, 2003 թ.

  Վերաբերում է բոլոր հանգամանքներում մահապատժի վերացմանը:

Թիվ **14** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը հունիսի, 2010 թ.

  նախատեսում է, մասնավորապես, դատական նոր կազմերի ստեղծումը, որոնք զբաղվում են առավել ակնհայտ գործերով, և սահմանում է ընդունելիության նոր չափանիշները: Այս արձանագրությամբ նաև երկարացվում է դատավորների պաշտոնավարման ժամկետը՝ 6-ից մինչև 9 տարի՝ առանց երկրորդ ժամկետ պաշտոնավարելու իրավունքի:

Թիվ **15** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը օգոստոսի, 2021 թ.

  Ներդնում է դրույթ սուբսիդիարության սկզբունքի և հայեցողության շրջանակի (անգլ.՝ «margin of appreciation») հայեցակարգային մոտեցման մասին: Կրճատում է Դատարան դիմելու ժամկետը՝ 6-ի փոխարեն սահմանելով 4 ամիս:

Թիվ **16** արձանագրություն.

- Ուժի մեջ մտնելու ամսաթիվը. 1-ը օգոստոսի, 2018 թ.

  Մասնակից պետությունների ամենաբարձր ատյանի դատարաններին հնարավորություն է ընձեռում խորհրդատվական կարծիք խնդրել Դատարանից:

Հավելված 5. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ստորագրումների և վավերացումների ցանկը (համաձայնագիր թիվ 005)

	Ստորագրություն	Վավերացում	Ուժի մեջ մտնել
Ալբանիա	13/07/1995	02/10/1996	02/10/1996
Անդորրա	10/11/1994	22/01/1996	22/01/1996
Հայաստան	25/01/2001	26/04/2002	26/04/2002
Ավստրիա	13/12/1957	03/09/1958	03/09/1958
Ադրբեջան	25/01/2001	15/04/2002	15/04/2002
Բելգիա	04/11/1950	14/06/1955	14/06/1955
Բոսնիա և Հերցոգովինա	24/04/2002	12/07/2002	12/07/2002
Բուլղարիա	07/05/1992	07/09/1992	07/09/1992
Խորվաթիա	06/11/1996	05/11/1997	05/11/1997
Կիպրոս	16/12/1961	06/10/1962	06/10/1962
Չեխիայի Հանրապետություն	21/02/1991	18/03/1992	01/01/1993
Դանիա	04/11/1950	13/04/1953	03/09/1953
Էստոնիա	14/05/1993	16/04/1996	16/04/1996
Ֆինլանդիա	05/05/1989	10/05/1990	10/05/1990
Ֆրանսիա	04/11/1950	03/05/1974	03/05/1974
Վրաստան	27/04/1999	20/05/1999	20/05/1999
Գերմանիա	04/11/1950	05/12/1952	03/09/1953
Հունաստան	28/11/1950	28/11/1974	28/11/1974
Հունգարիա	06/11/1990	05/11/1992	05/11/1992
Իսլանդիա	04/11/1950	29/06/1953	03/09/1953
Իռլանդիա	04/11/1950	25/02/1953	03/09/1953
Իտալիա	04/11/1950	26/10/1955	26/10/1955
Լատվիա	10/02/1995	27/06/1997	27/06/1997
Լիխտենշտեյն	23/11/1978	08/09/1982	08/09/1982
Լիտվա	14/05/1993	20/06/1995	20/06/1995
Լյուքսեմբուրգ	04/11/1950	03/09/1953	03/09/1953

	Ստորագրություն	Վավերացում	Ուժի մեջ մտնել
Մալթա	12/12/1966	23/01/1967	23/01/1967
Մոլդովայի Հանրապետություն	13/07/1995	12/09/1997	12/09/1997
Մոնակո	05/10/2004	30/11/2005	30/11/2005
Մոնտենեգրո	03/04/2003	03/03/2004	06/06/2006
Նիդեռլանդներ	04/11/1950	31/08/1954	31/08/1954
Հյուսիսային Մակեդոնիա	09/11/1995	10/04/1997	10/04/1997
Նորվեգիա	04/11/1950	15/01/1952	03/09/1953
Լեհաստան	26/11/1991	19/01/1993	19/01/1993
Պորտուգալիա	22/09/1976	09/11/1978	09/11/1978
Ռումինիա	07/10/1993	20/06/1994	20/06/1994
Ռուսաստանի Դաշնություն*	28/02/1996	05/05/1998	05/05/1998
Սան Մարինո	16/11/1988	22/03/1989	22/03/1989
Սերբիա	03/04/2003	03/03/2004	03/03/2004
Սլովակիայի Հանրապետություն	21/02/1991	18/03/1992	01/01/1993
Սլովենիա	14/05/1993	28/06/1994	28/06/1994
Իսպանիա	24/11/1977	04/10/1979	04/10/1979
Շվեդիա	28/11/1950	04/02/1952	03/09/1953
Շվեյցարիա	21/12/1972	28/11/1974	28/11/1974
Թուրքիա	04/11/1950	18/05/1954	18/05/1954
Ուկրաինա	09/11/1995	11/09/1997	11/09/1997
Միացյալ Թագավորություն	04/11/1950	08/03/1951	03/09/1953

* 2022 թ. սեպտեմբերի 16-ին Ռուսաստանի Դաշնությունը դադարեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային մասնակից լինելուց:

Կոնվենցիայի արձանագրությունների ստորագրումների և վավերացումների ցանկն առկա է Համաձայնագրերի գրասենյակի կայքէջում՝ հետևյալ հղումով. www.coe.int/en/web/conventions.

Կոնվենցիայի տեքստի բնօրինակը

HYE

www.echr.coe.int

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE